Հավելված N 12

ՀՀ կառավարության 2019 թվականի

դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Սույն կարգի իմաստով օգտագործվում են հետևյալ հասկացությունները

1) **Տնտեսող/ Խնայող գործունեություն**՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների նվազեցում՝ պահպանելով միջոցառման համար նախապես սահմանված ուղղակի արդյունքային ցուցանիշը:

2) **Արդյունավետ գործունեություն**՝ միջոցառման ուղղակին արդյունքային ցուցանիշի իրագործման աստիճան, այսինքն՝ միջոցառման ուղղակի արդյունքային պլանավորված ցուցանիշի և փաստացի արդյունքի համեմատությունը.

3) **Օգտավետ գործունեություն**՝ տրված ռեսուրսների (ներդրումների) պարագայում միջոցառման ուղղակի արդյունքային ցուցանիշի առավելագույն մակարդակի ապահովում.

2. Սույն կարգով կանոնակարգվում է՝

1) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ և Հայաստանի Հան-

ռապետության տվյալ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը (այսուհետ՝ կառավարություն) վերապահված իրավասությունների շրջանակներում բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների (այսուհետ՝ գլխավոր կարգադրիչներ) գծով Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով (այսուհետ՝ տվյալ տարվա պետական բյուջե) նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարումը.

2) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված բյուջետային ծրագրերի միջոցառումները (այդ թվում բյուջետային ծրագրի միևնույն միջոցառումը) կատարող պետական մարմինների (այսուհետ՝ միջոցառումները կատարող պետական մարմիններ) ցանկերում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը.

3) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4.1-րդ մասին համապատասխան կառավարության կողմից սահմանված՝ տվյալ տարվա պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնություններով նախատեսված հատկացումների միջեռամսյակային տեղաշարժերի կատարումը:

3. Սույն կետում նշված դեպքերում տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումներ, միջոցառումները կատարող պետական մարմինների ցանկերում փոփոխություններ և (կամ) լրացումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, ինչպես նաև տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով գլխավոր կարգադրիչները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնում են համապատասխան որոշման նախագիծ՝

1) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսվող «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի ներգրավվածությամբ բյուջետային հատկացումների միջծրագրային վերաբաշխումների դեպքում.

2) կապիտալ շինարարության և հիմնանորոգման ծրագրերում (միջոցառումներում) (ներառյալ նախագծումը, հեղինակային և տեխնիկական հսկողությունը) ընդգրկված օբյեկտների ցանկերի կազմի և (կամ) դրանց գծով սահմանված հատկացումների փոփոխություն ենթադրող վերաբաշխումների դեպքում.

3) գլխավոր կարգադրիչների միջև բյուջետային ծախսերի վերաբաշխումների դեպքում.

4) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված բյուջետային ելքերի գծով կառավարության հաստատած արդյունքային (կատարողական) ցուցանիշների փոփոխմանը հանգեցնող վերաբաշխումների դեպքում.

5) տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում նախատեսված մրցակցային գնման ձևը ոչ մրցակցային գնման ձևով փոփոխելու դեպքում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

6) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված կապիտալ բնույթի և հանրային սեփականության կառավարմանն առնչվող միջոցառումների գծով ծախսերի նվազմանը հանգեցնող վերաբաշխումների դեպքում.

7) Այն վերաբաշխումները, որոնք առաջացնում են բյուջետային հատկացումների տնտեսագիտական դասակարգման դասերի փոփոխություններ.

4. Սահմանել, որ գլխավոր կարգադրիչները ինքնուրույն են իրականացնում իրենց կողմից իրականացվող ծրագրերի գծով միջծրագրային վերաբաշխումները՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված բոլոր ծախսային ծրագրերի գծով հաստատված տարեկան հատկացումների հանրագումարը և այդ հանրագումարի՝ սույն որոշման N 3, 4 և 5-րդ հավելվածներով սահմանված եռամսյակային բաշխման աճողական գումարները (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետում նախատեսված դեպքերի)՝ համաձայնեցնելով այդ ծրագրերի միջոցառումները կատարող պետական մարմինների հետ և ծանուցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

5. Սահմանել որ ծրագրերի միջոցառումները կատարող պետական մարմինները ինքնուրույն են իրականացնում ներքին հոդվածային վերաբաշխումները, միևնույն ծրագրի՝ իրենց կողմից իրականացվող միջոցառումների միջև և միջեռամսյակային վերաբաշխումները՝ պահպանելով մարմնի կողմից այդ ծրագրերի շրջանակներում կատարվող՝ բոլոր միջոցառումների գծով հաստատված տարեկան հատկացումների հանրագումարը և այդ հանրագումարի՝ սույն որոշման N 3, 4 և 5-րդ հավելվածներով սահմանված եռամսյակային բաշխման աճողական գումարները

(բացառությամբ սույն կարգի 3-րդ կետում նախատեսված դեպքերի) ծանուցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

6. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասով նախատեսված՝ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված բյուջետային միջոցներն արդյունավետ, օգտավետ և (կամ) խնայողաբար/տնտեսող կառավարելու արդյունքում առաջացող տնտեսումն (բացառությամբ գնումների ընթացակարգերի արդյունքում ձևավորված տնտեսումների) ուղղել այդ պետական մարմնի աշխատակիցների պարգևատրմանը, որը չի կարող գերազանցել ընթացիկ տարվա ընթացքում փաստացի վճարված հիմնական աշխատավարձի ֆոնդի տարեկան հանրագումարը:

7. 2020 թվականի ընթացքում գնման գործընթացի շրջանակներում գնման մրցակցային ձևերով կամ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով կնքված գործարքների արդյունքում առաջացած տնտեսումները ենթակա են վերադարձման պետական բյուջե, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1289-Ն որոշմամբ նախատեսված մարմինների արտաբյուջետային հաշվների միջոցների հաշվին գնման գործընթացի շրջանակներում կնքված գործարքների արդյունքում տնտեսումների առաջացման դեպքում:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կատարվող վերաբաշխումները, որոնք ներառում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ, ապա այդ հատկացումներն արտացոլվում են առանձին հավելվածով: